ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝** Ստեղծարարական ունակությունների զարգացումն ու բացահայտումը մայրենիի դասընթացի միջոցով

**ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝** *ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ*

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ՀԱՍՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ

**ՈՒՍՈՒՑԻՉ՝** ՄԱՐԻՆԵ ՄԱԽՍՈՒԴՅԱՆ

**ԴՊՐՈՑ՝** ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈԼԱՔԱՐԻ Ալ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

**Ք. Մարտունի 2022 թ.**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ----------3
Գրական ակնարկ----------5
Փորձարարական հետազոտություն----------7
Հետազոտության ընթացք----------10
Վերլուծություն----------13
Եզրակացություն----------15
Օգտագործված գրականություն ցանկ----------16
Հավելվածներ----------17

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*ՈՒժեղ երևակայությունը իրադարձություն է ծնում*

Մոնտե

Աշխարհը վերազինվում է նորագույն տեխնոլոգիաներով և ներկայիս տեխնիկապես հագեցված «տեղեկատվական գրոհի» ժամանակաշրջանում մեծ խնդիր է սովորողների համար հետաքրքրություն ներկայացնող ստեղծագործական մեթոդի ընտրությունը. այն պետք է լինի նորույթ, հաճելի և գրավիչ ու խթանի նրանց հետաքրքրությունը: Մասնագիտական շուկայում մրցակցությանը դիմակայելու համար մասնագետներին անհրաժեշտ են կոմպետենցիաներ, որոնց շնորհիվ հնարավոր է գտնել նոր գաղափարներ, խնդրի անսովոր լուծումներ, արագ արձագանքել միջավայրի փոփոխություններին, մշակել յուրօրինակ ռազմավարություններ: Արդի ժամանակաշրջանը ու նրա կառավարումը պահանջում է ուրույն մտածող, ստեղծագործ, վառ երևակայությամբ օժտված հավակնոտ մասնագետներ, քանի որ արդեն իսկ բավարար չեն միակ ճիշտ լուծում ունեցող խնդիրները, անհրաժեշտ են այլընտրանքներ, այլընտրանքային լուծումներ: Եվ մերօրյա ստեղծարար անձը պահանջված է հասարակության զարգացման բոլոր փուլերում: Ուստի ինչպես գտնում է Ս. Մասլոուն, պետք է մշակվի ուսուցման նոր տիպ՝ ուղղված նոր, գործունյա, ստեղծարար, ինքն իրեն վստահող, ազատ մարդու ստեղծմանը[1]:

***Թեմայի արդիականությունը***

Ժամանակակից կրթական համակարգում տեղի ունեցող արմատական փոփոխությունները ուսուցման և դաստիարակության գործընթացում, որպես առաջատար հիմնախնդիր, առաջ են քաշում նոր տեխնոլոգիաների օգտագործման անառարկելի պահանջ:

**Աշխատանքի նպատակն է** մայրենի առարկայի դասավանդման միջոցով խթանել աշակերտների երևակայական ներուժը, զարգացնել ստեղծարարական մտածողությունը և պատրաստել արդի ժամանակներին համապատասխան աշխարհայացքով օժտված

[1] Маслоу А., Дальние переделы человеческой психики, СПБ: Евразия /1999/, 432с.

մրցունակ մարդիկ՝ բոլոր մասնագիտությունների գծով: Դրան հասնելու համար դրվել և լուծվել են հետևյալ փոխկապակցված **խնդիրները.**

- հիմնավորվել է մայրենիի դասընթացը, որպես սովորողների ստեղծարարական ունակությունների զարգացման բաղադրիչ,
- փորձարկել, խթանվել է սովորողների երևակայական ներուժը, որպես ստեղծարարական ունակությունների զարգացման գլխավոր գործոն,
- բացահայտվել են ստեղծարարական գործոնների մանկավարժական կոմպենտենցիաների միջև առկա կապերը:

Ժամանակակից կրթությունը նպատակաուղղված է այդ համակարգում կենտրոնական տեղ զբաղեցնող անձի ճանաչողական կարողությունների և ինքնուրույնության զարգացմանը: Ապագայում աշակերտը հնարավորություն է ունենում իրեն լիարժեք դրսևորելու, ուսման նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու:

Գիտենք՝ ցանկացած դասարան ձևավորվում է ըստ աշակերտներկի տարիքի, սակայն այդ երեխաների միևնույն տարիքային խմբում լինելը դեռևս չի ենթադրում զարգացման ու պատրաստականության միևնույն մակարդակներ: Նրանք ուսումնական գործընթացում ցուցաբերում են գիտելիքների յուրացման տարբեր աստիճաններ և առաջ են շարժվում զարգացման տարբեր տեմպերով:

Վերջին տասնամյակում Հայաստանի Հանրապետությունում այս կապակցությամբ գործում են բազմաթիվ կրթական ծրագրեր, որոնք, չբացառելով դասական մանկավարժության մեջ և մեթոդիկայում ընդունված ավանդական սկզբունքներն ու մեթոդները, փորձում են կրթական համակարգում կարևորել աշակերտներին՝ ուսուցման գործընթացի օբյեկտից նրանց վերածելով սուբյեկտի, ուսուցչին գիտելիքների միակ աղբյուրից վերածելով աշակերտի գործընկերոջ, օգնականի՝ իրականացնելով անձնակողմնորոշիչ կրթադաստիարակչական գործընթաց:

## ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Կառավարչական գործունեության մեջ ստեղծարարությունը ամենակարևոր ներուժն է և հարստությունը, որի առկայության շնորհիվ ստեղծվում են նոր գաղափարներ, կազմակերպվում և խթանվում է նորանոր արդյունքի ստեղծումը, մշակվում են գործունեության ճկուն ռազմավարություններ: Ստեղծարարության զարգացումը ժամանակի հրամայականն է և դիտարկվում է որպես զարգացման մեխանիզմ, հասարակության առաջընթացի շարժիչ ուժ, նոոսֆերայի ստեղծող, որպես անհրաժեշտություն կյանքի անորոշ, անկանխատեսելի իրադարձություններում[2]: Ստեղծարարությունը չափազանց արժեքավոր է մարդկանց և հասարակության համար: Այն կազմված է արտադրողականության, առողջության հետ և օգուտ է բերում մարդկանց, հասարակությանը[3]: Անձնային զարգացման մակարդակում ստեղծարարության զարգացումն ապահովում է բավարարվածություն, ինքնանույնականացման աճ, ինչպես նաև ընդլայնում է մասնագիտական զարգացման հնարավորությունները[4]: Ստեղծարարության էությունը դիտարկվում է Լ. Գիլֆորդի, Պ. Թորենսի, Ֆ. Վիլյամսի և այլոց հայեցակարգերում: Ըստ ամերիկյան հետազոտող-մանկավարժ Պ. Թորենսի «ստեղծարարությունը» ոչ թե հատուկ, այլ ընդհանուր կարողություն է, որը հիմնվում է ընդհանուր ինտելեկտի, անձնային որակների և արդյունավետ մտածողության կարողության վրա[5]: Ջ.Գիլֆորդը առանձնացնում է ստեղծարար մտածողության չորս չափանիշներ՝ սահունություն, ճկունություն, յուրօրինակություն և մշակվածություն[6]: Ըստ Ֆ. Վիլյամսի ստեղծարարությունը մտածողության և անձնային որակների որոշակի ամբողջություն է, որը նպաստում է ստեղծագործության դրսևորմանը[7]:

---

[2] Дронова Т.А., Формирование интегрально-креативного стиля мышления будущих педаго- гов в образовательной среде вуза: Москва-Воронеж /2007/, 368 с.

[3] Creativity: from potential to realization, edited by Robert J. Sternberg, Elena L. Grigorenko, and Jerome L. Singer /2004/, 223 p.

[4] Kane P., The Play Ethic: A manifesto for a different way of living, Macmillan, London /2004/

[5] Torrance E.P., The Nature of Creativity as Manifest in the Testing. The Nature of Creativity. Cambridge. /1988/ 75 p.

[6] Guilford J.P., Structure of intellekt model: New York /1969/ 64 p.

[7] Աղուզումցյան Ռ.Վ., Պետրոսյան Լ.Հ., Պողոսյան Ս.Հ., Խաչատրյան Ա.Ռ., Կառավարիչնե- րի հոգեբանական ընտրության գործընթացի առանձնահատկությունները, Երևան /2016/

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք ասել, որ ստեղծագործական մտածողությունը կամ կրեատիվությունը պարտադիր է յուրաքանչյուր այն մարդու համար, ով ստեղծում է իր սեփական արտադրանքը, այլ ոչ թե պատճենավորում է ուրիշինը: Արդյունքում մենք կկարողանանք արդյունավետ մտածել միայն այն ժամանակ, երբ մեր երևակայությունը սկսի անդադար ճամփորդել՝ պարբերաբար հանգեցնելով մեզ նոր գաղափարներ՝ մղելով ստեղծարարական միջավայր:

## ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ:

**Խմբի նկարագիրը**

Ուսուցման և ուսումնառության բարելավումը հնարավոր է միայն կրթության մեջ նոր գործնական կարողությունների ու հմտությունների ձևավորման պարագայում: Ուսումնառության ընթացքում գործնական կարողությունների և հմտությունների որակներ սովորողները ձեռք են բերում տեսական գիտելիքների շնորհիվ, որոնք բացահայտվում են փորձարարական պրակտիկայում և ուղղված են տեսական գիտելիքների խորացմանն ու աշխատանքային որոշակի մեթոդների յուրացմանը: Ստեղծարարական ունակություններով օժտված սովորողը մասնակից լինելու սեփական ուսումնառության պլանավորման, իրականացման և վերլուծության փուլերին՝ նորովի պատկերացումներով է սովորում սովորել: Սովորողների գործնական կարողությունները և հմտությունները ձևավորվում են գործնական աշխատանքների առաջադրման շնորհիվ, որոնք սովորողին մղում են ստեղծագործական դաշտ: Գործնական աշխատանքները կիրառվում են բոլոր ուսումնական առարկաների շրջանակներում, այդ թվում նաև մայրենիի ուսուցման բնագավառում: Այն ընթացիկ գնահատման արդյունավետ տեսակներից է՝ հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանված ութ առանցքային կարողունակությունների զարգացումն ապահովելու համար: Այն կառուցվում է մայրենի առարկայի չափելի վերջնարդյունքների վրա, ինչն էլ պայմանավորում է առաջադրանքի և աշխատանքի տեսակի ընտրությունը: Ըստ սովորողի գործունեության ձևի գործնական աշխատանքները բաժանվում են երեք խմբի՝

- **վերարտադրողական** - ինչ է սովորել և կարողանում անել սովորողը
- **մասամբ որոնողական** - երբ սովորողը ոչ միայն սովորել է, կարողանում է անել, այլև պետք է կատարի լրացումներ և լուծի իրեն առաջադրված խնդիրները
- **ստեղծագործական** - երբ սովորողը ինքը պետք է ինքնուրույն կամ խմբի անդամների հետ լուծում գտնի առաջադրված խնդիրների համար՝ ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ:

Մեր ընտրությամբ փորձագիտական խմբերին /3 խումբ/ առաջադրված գործնական աշխատանքի տեսակը համարում ենք ստեղծարարական հմտությունների

բացահայտման միջոց, քանի որ առկա տեսական գիտելիքներով պայմանավորված հարուստ տեղեկույթի շնորհիվ սովորողները կկարողանան իրենց դրսևորել ինչպես նորարար մտածելակերպով օժտված ստեղծարար անձիք:

Այդ նպատակին հասնելու համար, որպես թիրախային և փորձարարական խումբ ընտրել ենք 4-րդ դասարանը, իսկ հանձնարարվող գործնական աշխատանքի տեսակը՝ *խմբային հետազոտական*: Կատարվելիք գործնական աշխատանքի առաջադրված թեմա ենք ընտրել Սիլվա Կապուտիկյանի «Հայրենիք», Թվական անուն: Աշխատանքի նպատակն է արդի տեխնոլոգիական ժամանակներին համահունչ ստեղծարարական մոտեցումներով կազմակերպել հայրենիքին նվիրված բանաստեղծության գաղափարական բովանդակության, լեզվառճական առանձնահատկության և լեզվաքերականական գիտելիքների յուրացումը: Աշխատանքի կատարման ժամանակ դասարանը բաժանվել է երեք փորձագիտական խըմբերի /յուրաքանչյուրում 8 սովորող/, որոնք նախապես ունեին հարուստ տեսական գիտելիքներ հայրենիքի մասին: Յուրաքանչյուր խմբի տրվում է քարտեր, թղթեր և մատիտներ:

Ամեն խմբի համար որոշված առաջադրանքի տեսակը և կազմակերպման ձևը գրառվում է գրատախտակին: [Տես. հավելված 1] Ամեն խումբ իրեն առաջադրված բանալի բառերով կազմում է հինգ նախադասություն: Ապա, համադրելով դասագրքի նկարի պատկերների հետ, փորձում է գծագրել հայրենիքի պատկերը՝ նկարներով, արձակ կամ չափածո շարադրանքով, որով հասկանալի կլինի ստեղծարարական որակներով արտահայտված միտքը: Իսկ այդ միտքը պետք է լինի համահունչ խմբի կազմած նախադասություններին:

Անմիջապես դասի ընթացքում կատարված գործնական աշխատանքի արդյունքները դիտարկվեցին և փորձագիտական խմբերը գնահատվեցին: Իսկ սովորողները հնարավորություն ունեցան դասի ավարտին ստուգելու իրենց առաջադրված անսովոր խնդիրների կատարման ճշտությունը՝ ինքնատիպ և ստեղծարարական լուծելիության պայմաններում: Գնահատվեցին և ցուցադրվեցին խմբերի ստեղծագործական աշխատանքները: [Տես. հավելված 2] Գործնական աշխատանքի լավագույն արդյունքը ներկայացրին 3-րդ փորձագիտական խմբի սովորողները, որոնք իրենց առաջադրված հասկացություններով կազմված նախադասությունները այնպես էին ձևակերպել, որը շատ այլընտրանքային լուծում էր պահանջում և ենթադրում էր երևակայության բարձր

մակարդակ: Գործնական աշխատանքի 2-րդ արդյունքը ապահովվեցին 1-ին փորձագիտական խմբի սովորողները, որոնք իրենց կազմած նախադասությունների և պատկերված նկարի արձակ շարադրանքն էին կազմել որոշակի թերություններով: Նման պարագայում փորձագիտական խմբի երևակայության մակարդակը գնահատվեց միջին: Գործնական աշխատանքի ամենացածր արդյունքը ներկայացրին 2-րդ փորձագիտական խմբի սովորողները, որոնք ոչ միայն թերացել էին նախադասությունների կազմման պարագայում, այլև դրանք բովանդակային առումով ճիշտ ներկայացնելու գործում: Նման աշխատանքի կատարման պարագայում երևակայության մակարդակը գնահատվեց ցածր: [Տես. հավելված 3] Այսպիսով նոր աշխարհում ստեղծարարությունը դիտարկվում է որպես կառավարչական գործունեության իրականացման կարևոր գործոն, քանի որ այն նպաստում է յուրօրինակ որոշումների արագ ընդունմանը և նորարարությունների ներմուծմանը: Ռ. Ստենբերգը և Լյուբաշը նշում են, որ ստեղծարար անձիք ոչ թե պարզապես տեսնում են իրերը նորովի, այլև նրանց դուր է գալիս գտնել իրերի մեջ նոր բան, ինչն էլ էապես առանցքային է ստեղծարարական գործունեության մեջ, որի արդյունավետության համար անհրաժեշտ են ոչ միայն մասնագիտական գիտելիքներ, այլ նաև հմտություններ և կարողությունները, որոնք անձը ձեռք կբերի գործնական աշխատանքի հմտացման պայմաններում: Ստեղծարարությունը համարվում է որպես անձի ինտեգրալ որակ: Այն ամբողջությամբ անձնային և ինտելեկտուալ բնութագրերի համալիր է, ինչը թույլ է տալիս մարդուն արդյունավետ գործել անորոշության, նորույթի իրադրությունում: Այն առօրեականության, միօրինակության, կոմֆորիզմի որոշակի հակադրություն է, նաև մտածողության, հույզերի և շփման քարացածությունը հաղթահարելու գործընթաց:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Ստեղծարարական ունակությունների զարգացման հիմքը և խթանիչ ուժը համարվում է ժամանակակից կրթությունը և դպրոցը: Ժամանակակից կրթության բնագավառներից առաջնայինը դպրոցում դասավանդվող մայրենիի դասընթացը: Մեր համոզմամբ մայրենիի դասընթացը կարող է զարգացնել սովորողների ստեղծագործական ունակությունները և ձևավորել ժամանակի պահանջներին համապատասխան անձնային և մասնագիտական որակներ: Այդ խնդրի լուծման համար ընտրել ենք 4-րդ դասարանի «Ա՜յ քեզ բան, ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝ հա՛յ-րե՛-նի՛ք է» դասընթացը, իսկ առաջադրված թեման՝ Սիլվա Կապուտիկյանի «Հայրենիք» բանաստեղծությունը: Հետազոտական աշխատանքի ընթացքը իրականացրել ենք Հանրակրթական պետական ծրագրով սահմանված տվյալ թեմային հատկացված 2 դասաժամերով: /դաս 1, դաս 2/

**Դաս 1 /8.12.2022թ./** Օրվա դասի թեմատիկ պլանավորում [Տես. հավելված 4] Սիլվա Կապուտիկյանի «Հայրենիք», Թվական անուն թեման ուսումնասիրելիս խթանման փուլում ընտրել ենք մտքերի տարափ մեթոդը, որը կարծում ենք միջին դպրոցում սովորող երեխաների համար կարևոր է, քանի որ այդ տարիքում երեխաներն ավելի շատ խոսում և պատմում են: Իմ համոզմամբ այս մեթոդի կիրառումը շատ արդյունավետ է բանավոր խոսքը զարգացնելու, դասը կենդանի և աշխույժ դարձնելու, երևակայությունը և ստեղծագործական մտածողությունը խթանելու, լսելու, համագործակցելու, համարձակություն ու ինքնավստահություն ներշնչելու համար: Առաջադրվեց որպես հասկացություն թեմայի վերնագիրը՝ «Հայրենիք», իսկ սովորողները սկսեցին ազատ արտահայտել իրենց կարծիքների ու գիտելիքների պաշարները տվյալ թեմայի շրջանակում: Այնուհետև սովորողները, բաժանվելով աշխատանքային խմբերի /8 սովորող/, մուտքագրում են ցանկացած պատասխան, իսկ խմբի մյուս անդամները լսում և մտապապահում են հնչող կարծիքները: Այնուհետև իմաստի ընկալման փուլում շրջագայություն պատկերասրահում մեթոդի օգտագործմամբ փորձել ենք պահպանել հետաքրքրության աճը սովորողների մոտ: Այս մեթոդի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ, զարգացնել լսելու, ինքնուրույն և ստեղծագործաբար մտածելու, աշխատանքի արդյունքները ներկայացնելու հմտություններ: Կատարվեց խմբային աշխատանք /3 խումբ-յուրաքանչյուրում 8

սովորող/: Ուսումնական նյութը պետք է ուսումնասիրվի բովանդակային 3 դիտարկմամբ և յուրաքանչյուր խմբի տրվեց դրանցից մեկը ուսումնասիրելու: Յուրաքանչյուր խմբի աշխատանքը նկարի, արձակ կամ չափածո ձևակերպմամբ փակցվեց գրատախտակին: Այնուհետև խմբերը «պատկերասրահով» շրջելով և կանգնելով աշխատանքների մոտ խմբի անդամի ներկայացմամբ փորձեցին յուրացնել դասը յուրովի: Աշխատանքի դիտումից հետո կատարվեց վերլուծություն և եզրահանգում:

Կշռադատման փուլում դասը յուրացնելուց հետո ներկայացվեց առաջադրանքներ, որոնց լուծումը պահանջում էր սովորողներից ստեղծարարական և նորովի մտահանգումներ: [Տես. հավելված 2] Խմբերի պատասխանները այլընտրանքային էին և գոհացուցիչ, կատարվեց գնահատում: [Տես. հավելված 3]

**Դաս 2 /9.12.2022թ/**. Օրվա դասի թեմատիկ պլանավորում [Տես. հավելված 7] Սիլվա Կապուտիկյանի «Հայրենիք», Թվական անուն թեման ուսումնասիրելիս խթանման փուլում ընտրել ենք հարցադրման մեթոդը՝ առաջադրելով հետևյալ հարցերը «Ինչ գիտեք հայրենիքի մասին», «Ինչ պետք է անել հայրենիքի համար»: Այնուհետև գրատախտակին գրվեցին այն մտքերը, որոնք առաջադրվեցին սովորողների կողմից՝ առանց մեկնաբանության և վերլուծության: Իմաստի ընկալման փուլում ընտրել ենք խմբային հետազոտական մեթոդը և դասարանը բաժանել ենք երեք խմբի /8 սովորող/: Այնուհետև խմբի մեկ համարները /8 սովորող/հավաքվում են 1համարի սեղանի շուրջ 2-րդ համարները՝ 2-րդ սեղանի շուրջ, 3-րդ համարները՝ 3-րդ սեղանի շուրջ: Այդ երեք խմբերը կոչվեցին փորձագիտական խմբեր և ամեն մի խումբ, յուրացնելով իրեն հանձնարարված թեման կատարեց փորձագիտական քննարկում և վերլուծություն խմբի ներսում: Հետո հին խմբերը տրոհվեցին և ձևավորվեցին նոր խմբեր, որտեղ յուրաքանչյուր հին խմբի անդամ նոր խմբի մյուս անդամներին ներկայացնում է իր խմբում վերլուծության արդյունքում յուրացված գիտելիքները: Արդյունքում նոր դասի թեման ոչ միայն յուրացվեց դասին, այլ նաև քննարկվեց և վերլուծության ենթարկվեց: Փորձագիտական խմբերի վերլուծության արդյունքների ճշտությունը ուղղորդվում և կազմակերպվում էր մեր կողմից: Կշռադատման փուլում մեր ընտրությամբ օգտագործվել են այնպիսի առաջադրանքներ, որոնց լուծումը պահանջում է վառ երևակայություն և ստեղծագործական մոտեցում: [Տես. հավելված 8] Նպատակադրումը ճիշտ և տեղին է ,

քանի որ առաջադրանքներով կվերհանվի աշակերտների ստեղծարարական ունակությունների մակարդակը: Դասի ընթացքում կատարվեց գնահատում: [Տես հավելված 9]

## ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վերլուծությունը գիտական ճանաչողության մեթոդ է, որն իրենից ներկայացնում է հետազոտվող համակարգի փոփոխականների կամ տարրերի միջև կառուցվածքային կապերի հայտնաբերմանն ուղղված գործողությունների հաջորդականություն: Գործողությունների հաջորդականությունը պահանջում է փուլային մոտեցում՝ սահմանների որոշում, պրոբլեմի վերլուծություն, պայմանների վերլուծություն, տրամաբանական պլան և որոշումների վերլուծություն:

Մեր օրերում միջազգային կրթական համատեքստի բազմակի գործընթացներով պայմանավորված տեղի են ունենում փոփոխություններ, որոնք շատ արդիական են և կարևոր:

Ներկա անձնակողմնորոշիչ ուսուցման պայմաններում ստեղծվում են բարենպաստ կրթական միջավայր, որտեղ սովորողները կարող են ստեղծարարական ունակություններով ազատ և ինքնուրույն գործել: Դրանից էլ հետևություն, որ մայրենիի ուսուցման գործընթացում կարողությունների բազմակի կրկնությունը վեր է ածվում հմտությունների, իսկ հմտությունների շրջանակներում ձեռք բերված ստեղծագործական գործունեության փորձը կարող է ապագայում հիմք հանդիսանալ ստեղծարարական ունակություններով օժտված մասնագիտական թիմի ձևավորմանը:

Որպես սովորողների երևակայության ներուժ՝ ստեղծարարական ունակությունների բացահայտումը մայրենիի դասընթացի միջոցով փորձարարական էր և շատ հետաքրքիր: Կատարված աշխատանքների համատեքստում կիրառված մեթոդները ճիշտ էին ընտրված և ծառայեցին նպատակի իրականացմանը: Կատարված աշխատանքի գնահատման համակարգի վերլուծությամբ պայմանավորված կարող ենՔ պնդել, որ մայրենիի դասընթացը զարգացնում է սովորողների ստեղծարարական գիտելիքները: Գնահատման արդյունքների ախտորոշմամբ պայմանավորված սովորողների մոտ ստեղծարարական ունակությունների մակարդակը կարելի է գնահատել դրական/լավ/:

Աշխատանքի տեսական և փորձարարական վերլուծությունից պարզ դարձավ, որ մայրենիի դասընթացը խթանիչ ուժ է հանդիսանում ստեղծարարական

ունակությունների զարգացման համար, իսկ մերօրյա դպրոցներում սովորողների գործնական «տաղանդը» պայման է մասնագիտական որակների ձևավորման համար:

Այսպիսով վերլուծությունից հետևություն, որ երևակայության ուսումնասիրությունը, որքան էլ տեխնիկապես հեշտ է հետազոտական գործիքակազմի բազմազանության առումով, միաժամանակ բարդ է, քանի որ անհնար է ստանալ հնարավորինս օբյեկտիվ տվյալներ՝ սահմանափակվելով ստանդարտ մեթոդիկաներով:

Հետազոտման ամփոփիչ գնահատման արդյունքները հաշվարկելու համար օգտվել ենք Ջ. Բրունների կրեատիվությունը բնութագրող սանդղակից:

Իսկ գնահատման վերլուծությունից ստացված արդյունքներով փորձարարական խմբերում երևակայության մակարդակը հետևյալն է: [Տես. հավելված 3] [Տես. հավելված 9]: Իսկ գնահատման վերլուծությունից ստացված արդյունքներով փորձարարական խմբերում երևակայության մակարդակը հետևյալն է: [Տես. հավելված 6 ]

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ամփոփելով հետազոտական աշխատանքը, արդյունքում կարող ենք ասել, որ մայրենիի ուսուցման գործընթացը սովորողներին, որպես ապագա մասնագետների ստեղծարարության զարգացումն այլ որակների հետ համադրությամբ հնարավորություն կընձեռի լավագույնս հաղթահարելու ժամանակակից աշխարհի մարտահրավերները :

Դասընթացի միջոցով բացահայտվեց նաև ստեղծարարական գլխավոր գործոններից մեկի՝ երևակայության որոշիչ և արդիական լինելը:

Մեր համոզմամբ մայրենիի դասընթացը օգնեց բացահայտելու մանկավարժական կոմպենտենցիաների և ստեղծարարական գործոնների միջև առկա ուղիղ և դրական կապերը, որոնց ճիշտ և նպատակային համադրման պայմաններում կարող ենք ստանալ ցանկալի արդյունք:

Եվ արդի պայմաններում ստեղծարարական ունակություններով օժտված մարդը պահանջված կլինի ոչ միայն կրթական ոլորտում, այլ նաև ձեռնարկատիրական գործունեության մեջ, անձնային հարաբերություններում և աշխատանքային գործունեության ցանկացած ոլորտում:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Խաչատրյան Ս. Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2008:

2. Մայրենի 4 դասագիրք, Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Երևան 2005.:

3. Մայրենի 4 մեթոդական ձեռնարկ, Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Գրիգորյան Ս., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., Երևան 2009:

4. Սարուխանյան Ս. և ուրիշներ Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ,Վանաձոր, 2008 :

5. Վարդումյան Ս., Ջաղինյան Վարելլա Գ., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ:

6. Маслоу А., Дальние переделы человеческой психики, СПБ: Евразия /1999/, 432с.

7. Дронова Т.А., Формирование интегрально-креативного стиля мышления будущих педагогов в образовательной среде вуза: Москва-Воронеж /2007/, 368 с.

8. Creativity: from potential to realization, edited by Robert J. Sternberg, Elena L. Grigorenko, and Jerome L. Singer /2004/, 223 p.

9. Kane P., The Play Ethic: A manifesto for a different way of living, Macmillan, London /2004/

10. Torrance E.P., The Nature of Creativity as Manifest in the Testing. The Nature of Creativity. Cambridge. /1988/ 75 p.

11. Guilford J.P., Structure of intellekt model: New York /1969/ 64 p.

12. Шурхут С.М., Подростковый возраст: развитие креативности, самосознания, эмоций, кому- никации и ответственности. СПБ., Речь, /2006/ 112

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

**Հավելված 1.**

| I-**խումբ** | II-**խումբ** | III-**խումբ** |
|---|---|---|
| հայրենիք | հայրենիք | հայրենիք |
| լեռներ | հովեր | զավակներ |
| երկինք | աշխարհ | արյուն |
| հպարտ | փառք | սրտագին |
| փառք | սփռել | անմահ |

**Հավելված 2**

I-**խումբ**

Հայրենիքի պատկերը միշտ վառ է իր որդիների համար: Հեղինակն այստեղ ներկայացնում է հողմերին ու հովերին: Նրանք փոխաբերական իմաստով հայրենիքի փառքը սփռում են աշխարհով մեկ: Հետաքրքիր է հեղինակի ընտրած երևույթները՝ հովեր և հողմեր: Իսկապես մեր հայրենիքը հովերի պես մեղմ է, սակայն հաճախ հողմերի պես զայրացկոտ է, ծառս լինում աշխարհի դեմ:

II-**խումբ**

Մեր հայրենիքը հարուստ է լեռներով: Լեռների կատարներից շատ մոտ է երկինքը: Իմ հայրենքի երկինքը միշտ պայծառ է: Ես հպարտ եմ իմ հայրենիքով: Իմ հայրենքի փառքն անմահ է:

**III-խումբ**

Հայրենիքը սուրբ է,

Անգին գանձ է մեզ համար:

Յուրաքանչյուրս պարտական ենք

Ռոպե առաջ պաշտպան կանգնել:

Ելնել մարտի՝ հանուն փառքի:

Նորից կշռել չափը մեր բազկի

Ի հեճուկս ինքնակոչ մեր թշնամու:

Քանի ես կամ, դու հզոր ես իմ հայրենիք:

**Հավելված 3**

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

ԸՍՏ Ջ. ԲՐՈՒՆԵՐԻ ԿՐԵԱՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՄԱԿԱՐԴԱԿԻ

| **Խումբ** | **Մակարդակ** | **Գնահատական%** |
|---|---|---|
| 3 | բարձր | 45 |
| 1 | միջին | 35 |
| 2 | ցածր | 20 |

Հավելված 4

ԴԱՍԱՊԼԱՆ 1

Ուսուցիչ՝ Մարինե Մախսուդյան

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Առարկա՝** | **Մայրենի** | **Ամսաթիվ** | **08.12.2022** | **Կիսամյակ** | **I** | **Դասարան** | 4 |

| | |
|---|---|
| **Թեմա՝** | Սիլվա Կապուտիկյանի «Հայրենիք» բանաստեղծությունը |
| **Օգտագործվող նյութեր՝** | Դասագիրք, տետր, գրիչ, մատիտներ, քարտեր, պաստառներ, պրոյեկտոր, էկրան և այլն: |
| **Դասի նպատակը՝** | Բանաստեղծության բովանդակության ուսուցում, գաղափարի վերհանում, բառային աշխատանքի միջոցով բառապաշարի հարստացում, քերականական գիտելիքների գործնականում կիրառելու հմտություն: |
| | **Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ** |
| **Վերջնարդյունքները** | Արտահայտիչ ընթերցել բանաստեղծությունը, դուրս բերել ընդհանուր գաղափարը, հարստացնել բառապաշարը նոր բառերով, յուրացնել թվական խոսքի մասը, սիրել և պաշտպան լինել հայրենքին, կարողանալ սովորել և սովորեցնել: |

| | |
|---|---|
| **Ուսուցչի զարգացման ընթացիկ թիրախներ** | ***Նպատակներին հասնելու ռազմավարությունը*** |
| Համագործակցային աշխատանքի միջոցով աշակերտների առավելագույն ներգրավվածության ապահովում: | *Նախատեսում եմ խմբային աշխատանք՝ արձանագրելով թե յուրաքանչյուր խմբի, թե սովորողներից յուրաքանչյուրի դինամիկան:* |

| **Գործողություններ (Ժամ/տևողություն)** | **Ուսումնական գործունեություն Աշակերտներ** | **Պլանավորված տարբերակում Ուսուցիչ** | **Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ (հանձնարարության** |
|---|---|---|---|

| | | | **վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)** |
|---|---|---|---|
| Մուտք, ներկա-բացակա /3ր/<br><br>Սկիզբ /5-7 րոպե/ | Աշակերտները լսում են, տրված հարցերի մասին, հիշում անցածը, պատասխանում են հարցերին: | Մտագրոհ է անում *Հայերնիք* բառի շուրջ, աշակերտների կողմից ներկայացված հայրենիքը բնորոշող բառերը գրի է առնում, խրախուսում պատասխանները, ամփոփում: | |
| Ընթացք /20-25/ | Նախօրոք խմբերի բաժանված և իրենց անվանում ընտրած խմբերը քարտերի վրա գրում են լեռներ, արծիվներ, հովեր, հողմեր բառերը բնութագրող արտահայտություն (քանի որ նշված բառերը բնագրից են, նախատեսվում է այս փուլում ամրապնդել բառի | Ուշադրություն պետք է դարձնել բառաբացատրությանը, աշխատանք է տարվում նոր բառերի և բառակապակցությունների վրա: Ուսուցիրը բացատրում, մեկնաբանում է գովք, փառք, վեհ և այլ բառերի իմաստը: | Ըստ բանաստեղծության՝<br><br>*Ինչ էին անում հովերը*<br><br>*Ինչ էին անում արծիվները*<br><br>*Ինչ էին անում լեռները*<br><br>*Ինչ էին անում աղբյուրները*<br><br>*Ըստ բանաստեղծության ի՞նչ էին անում զավակները:*<br><br>*Հայրենիքի փառքի* |

| | | | |
|---|---|---|---|
| | ուղիղ իմաստը, դասի վերջում մեկնաբանել ըստ բնագրային իմաստի և ըմբռնել բառերի գեղարվեստական արժեքը):<br><br>Հանձնարարել ուշադիր ընթերցել բնագիրը, ընդգծել անծանոթ բառերը: Աշակերտները աշխատում են նախ անհատապես, ապա զույգերով, հետո խմբով: Լուռ ընթերցելուց հետո կարդում են բնագիրը:<br><br>Այնուհետև պատմում են էջի նկարի բովանդակությունը, համեմատում բանաստեղծության հետ, կարծիք արտահայտում: | Այնուհետև տեքստային աշխատանք՝ ընթերցում են երկուական տող, մեկնաբանում,<br><br>Ի մի բերելով աշակերտների պատասխանները՝ բացատրել թվականը՝ օգտագործելով | *համար ուրիշ ի՞նչ կարելի է անել:*<br><br>*Ինչպիսի՞ն է քո ծննդավայրը:*<br><br>*Ո՞րն է կոչվում թվական*<br><br>*Ի՞նչ հարցերի է պատասխանում*<br><br>*Ի՞նչ տեսակներ ունի*<br><br>*Ի՞նչ նպատակով են կիրառվում:* |

| | | | |
|---|---|---|---|
| | Բանաստեղծության *«Որ փառքդ չորս կողմ տանեմ, հայրենիք»* նախադասության մեջ չորս բառը փոխարինում են քանակ ցույց տվող այլ բառերով, կամ չորս բառով այլ արտահայտություններ են կազմում:<br><br>Կատարում են առաջադրանքը, որտեղ թվային բաղադրիչով դարձվածները արտահայտում են մեկ բառով: | թվականներին վերաբերող ուսումնական պաստառը:<br><br>Անդրադառնում է խմբերի կողմից կատարված առաջադրանքներին: | |
| Ավարտ /10ր/ | 5 րոպեանոց ազատ շարադրանքի միջոցով աշակերտները գրավոր շարունակում են հետևյալ միտքը՝ | Հանձնարարում է ամեն խմբի թերթիկի վրա նշել իր կողմից նախատեսված վերջնարդյունքները սեփական ձեռքբերումների | Չափանիշներ՝<br><br>Բանաստեղծության գաղափարի և գեղարվեստական արժեքի վերաբերյալ գրագետ շարադրանք |

| | | | |
|---|---|---|---|
| | *«Հայրենիքի փառքի համար ես...»*<br><br>Այնուհետև կրկնակի գրառման օրառման օրագիր մեթոդի միջոցով պատասխանում են՝ ըստ բանաստեղծության՝<br><br>*Ինչ էին անում հովերը*<br><br>*Ինչ էին անում արծիվները*<br><br>*Ինչ էին անում լեռները*<br><br>*Ինչ էին անում աղբյուրները* | հետ, նշել նաև թերըմբռնումները՝ հաջորդ դասին անդրադառնալու: | Տրամաբանված խոսք<br><br>Քերականական գիտե;իքները գործնականում կիրառելու կարողություն |
| **Տնային հանձնարարություն :**<br><br>Բանաստեղծությունը սովորել անգիր: Կատարել առաջադրանք 2-ի բ կետը: | | | |

**Մեթոդմիավորման նախագահ՝** __Անուշ Ղարիբյան _____

**Փոխտնօրեն՝** ___Նորիկ Մխիթարյան_____

**Հավելված 5**

**Առաջադրանք 1**

Ըստ բանաստեղծության ի՞նչ էին անում արծիվները, հովերը, հողմերը, աղբյուրն ու գուսանը:

**Առաջադրանք 2**

Նամակ գրիր սփյուռքահայ քո հասակակցին՝ նկարագրելով ծննդավայրդ:

**Հավելված 6**

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

**/դաս 1/**

| Աշակերտներ | Գնահատական |
|---|---|
| 9 | 10-9 |
| 9 | 8-7 |
| 7 | 6-4 |
| 0 | 3-1 |

**Հավելված 7**

## Դ ԱՍԱՊԼԱՄ 2

**Ուսուցիչ՝** Մարինե Մախսուդյան

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Առարկա՝ | Մայրենի | ամսաթիվ | 9.12 | կիսամյակ | I | դասարան | 4-ր դ |
| Թեմա | Սիլվա Կապուտիկյան «Հայրենիք», Թվական անուն | | | | | | |
| Օգտագործվող նյութեր | դասագիրք-քարտեր, մատիտներ, գրիչ, տետր, պրոյեկտոր, էկրան, համակարգիչ: | | | | | | |
| Դասի նպատակը | Արտահայտիչ արտասանեն բանաստեղծությունը,<br>Վերլուծեն բանաստեղծության բովանդակությունը, դատողություններ անեն և արտահայտեն սեփական վերաբերմունքը հայրենիքի նկատմամբ,<br>Օգտվելով տեղեկատվական աղբյուրներից՝ նկարագրեն իրենց հայրենի քաղաքը, գյուղը,<br>Գործածեն թվականները խոսքի այլ մասերի հետ,<br>Կարողանան գրավոր շարադրել սեփական մտքերը: | | | | | | |
| **Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ** | | | | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Վերջնարդյունքները** | Սիրել և պաշտպան լինել հայրենիքին;<br>Գործնականում կիրառել ձեռք բերած քերականական գիտելիքները<br>Ձեռք բերել թիմում աշխատելու հմտություն<br>Կարողանալ սովորել և սովորեցնել<br>Զարգացնել ստեղծագործական երևակայությունը | | | |
| **Գործողություններ /ժամ,տևողություն/** | **Ուսումնական գործունեություն Աշակերտներ** | **Ուսումնական գործունեություն ուսուցիչներ** | **Հարցադրումներ** | **Կիրառվող մեթոդ /ներ/** |
| 45ր | Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքները: Նշումներ կատարել այն հարցերի վերաբերյալ, որոնք անհասկանալի կլինեն: | Տալ հարցադրումներ աշակերտներին ներ-գրավել դասապրոցեսին:Տալ ուղղորդող հարցադրումներ: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը: Նոր թեմայի հաղորդում, բանավոր հետադարձ կապի տրամադրում | 1. Ի՞նչ են անում զավակները հայրենիքի փառքի համար<br>2.Ի՞նչ բառեր կօգտագործեք դուք ձեր ծննդավայրը ներկայացնելու համար:<br>3. Որո՞նք են թվկանները:<br>4. Ի՞նչ տեսակների են լինում<br>5. Ո՞ր բառերի հետ են գործածվում: | հարցադրում, հետազոտական խմբային: |

| | |
|---|---|
| **Տնային աշխատանք** | Օգտվելով տեղեկատվական աղբյուրներից հարստացնել նամակի բովանդակությունը: |

Փոխտնօրեն՝ Նորիկ Մխիթարյան

**Հավելված 8**

**Առաջադրանք 1**

Որոշիր՝ որ բառերի հետ են գործածվել թվականները, և այդ բառակապակցությունները գրի՛ր տետրում:

Դու սովորում ես չորրորդ դասարանում:

Արագածն ունի չորս գագաթ:

Հայ շախմատիստները գրավեցին առաջին տեղը:

Սևանա լիճ թափվում է քսանյոթ գետ ու գետակ:

**Առաջադրանք 2**

Տրված բառերը բաժանել խմբերի և անուններ դնել՝

Քար, առաջին, փափկել, սիրտ, տասնհինգ, հինգերորդ, ջերմացնել, կարդալ, քառասուն, անտուն, չորրորդ, մոլոր, հազար, բարձր:

**Հավելված 9**

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

**/դաս 2/**

| Աշակերտներ | Գնահատական |
|---|---|
| 8 | 10-9 |
| 11 | 8-7 |
| 6 | 6-4 |
| 0 | 3-1 |

Հավելված 10

Հայտորոշիչ թեստ 1 «Հայրենիք»

Դասարան՝ _____

Խումբ՝ _____

1. Ի՞նչ հատկանիշ ունեն լեռները

1. հպարտ 3. անգին

2. վեհ 4. սրտագին

2. Աղբյուրներն ի՞նչ են կարկաչում

1. ձայն 3. փառք

2. կանաչ 4. երգ

3. Զավակներն հանուն հայրենիքի ի՞նչ են տալիս

1. արյուն 2. կյանք

3. աշխատանք 4. գովք

4. Ինչի՞ գովքն են անում աղբյուրներն ու գուսանները

1. փառքի 3. քաջության

2. հաղթանակի 4. բարության

Անուն, ազգանուն՝ _____ _____

## Հայտորոշիչ թեստ 2 Թվական անուն

Դասարան՝ ————

Խումբ՝ ————————

**1. Թվականը ցույց է տալիս՝**

1. Առարկայի թիվ

2. Առարկայի հատկանիշ

3. Առարկա

4. Գործողություն

**2. Նշվածներից ո՞րն է թվական**

1. վես 3. չորս

2. փառք 4. կողմ

**3. Նշվածներից ո՞րն է *«յոթ սարից այն կողմ»* դարձվածքի ճիշտ բացատրությունը՝**

1.մոտիկ 3. յոթ սար հաշված

2. հեռու 4. չերևացող

**4. Բառակապակցություններն արտահայտիր մեկ բառով՝**

1. 2 թև ունեցող----------

2. 3. ութ ոտք ունեցող-------

3. 7 գլուխ ունեցող-------

4. 4 հարկ ունեցող---------

Անուն, ազգանուն՝ ———————————— ————————————————